Վահան Տերյան

Շշուկ ու շրշյուն

Աշնան մշուշում շշուկ ու շրշյուն,
Բարդիներն են բաց պատուհանիս տակ,
Դու ես, որ դարձյալ թախիծով հիշում,
Կանչում ես նորից կարոտով հստակ:

Անտես ու հուշիկ իմ շուրջը շրջում,
Եվ շշնջում ես, և անուշ շրշում,
Պայծառ տրտմությամբ ինձ ես անրջում
Ու գաղտնի սիրով սիրում ու հիշում:

Ամպերը ճերմակ երամով անցան
Թռչունների պես, լուսեղե՛ն երազ,
Դո՛ւ ես, որ դարձյալ ժպտացիր անձայն
Քո հեռու հեռվից, անհայտ ու անհաս:

Ջրերն են անվերջ միգում հեկեկում,
Իմ սիրտն է լալիս կարոտով անհուն,
Թվում է, որ դու տխրությամբ անքուն
Ինձ ես որոնում աղոտ աշխարհում:

Եվ ժպտում ես ինձ, ակնարկում քնքուշ
Ու գաղտնի սիրով սիրում ու հիշում,
Եվ շշնջում ես, և շրշում անուշ,

Անտես ու հուշիկ իմ շուրջը շրջում: